

# **ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐ**

**ՊԱՏՐԱԱՍՏԵՑ**

**ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝**

**ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ  
ՖԵՐԱՅԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**2005-2006**

# ՄԵՐ ՏՕՆԵՐԸ

Տօները կան, որովհետեւ եղած են՝

- Հերոսներ,
- Սուրբեր,
- Մեծություններ,

որոնք կատարած են՝

- Պատմական արժեք ներկայացնող գործեր,
- Հաւատքի ու բարոյականութեան համար զոհողություններ, եւ կենսաւորեր՝ ընկերությունը արժեւորող գաղափարներ:

Անոնք՝ թե՛ ազգային, թե՛ պետական տօները, ընդունուած են բոլորին կողմէ:

Անոնք՝ թե՛ խորհրդանիշ են, թե՛ ուղենիշ:

Ուսանողները ոչ միայն պիտի յարգեն տօները, այլեւ պիտի ջանան միշտ հաղորդակից ըլլալ անոնց անժամանցելի եւ մնայուն արժեքներուն:

## ՈՒՂԵՑՈՅՑ

Ազգային, կրօնական, պետական այն բոլոր տոներու մասին, որոնց համար ուսումնական տարեշրջանի ընթացքին դպրոցը փակ կը մնայ օր մը, կամ՝ մասնաւոր յիշատակութեան առիթ կ'ըլլայ:

Թղթածրարը կը պարունակէ՝

ա.- Մասնաւոր գրութիւն մը, կամ անդրադարձ՝ տօնին պատմական, ազգային, կրօնական, ընկերային արժէքներուն եւ անանդութիւններու մասին:

բ.- Օժանդակ գրութիւններ (ոտանաւորներ, պատմուածքներ, ծանօթութիւններ), որոնք զուգահեռ են տօնին գաղափարական, բարոյական արժէքներուն եւ անոնց օգտագործումը կը նպաստէ ըմբռնելու զայն ըստ էութեան: Կը քաջալերենք, որ դուք ձեր կարգին մեզի առաքէք նմանօրինակ երական կտորներ հարստացնելու համամը մեր հաւաքածօն:

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

- Օժանդակ գրականութիւնը փորձառական շրջանէ մը ետք կրնայ յաւելեալ նոր նիւթերով աւելի եւս ճոխացուիլ:
- Այս միջոցառման նպատակն է օգնել ուսուցչին, որ տօնը կանխող օրին կամ օրերուն, պատրաստ թղթածրարի մը օգտագործումով - յարակից նիւթերու ընթերցում, խօսք, մեկնաբանութիւն - անհրաժեշտ պատգամ մը փոխանցէ աշակերտութեան, ինչ որ զուգահեռ է գիտակից քաղաքացի եւ հայեցի դաստիարակութիւն ջամբելու դպրոցի առաջադրութիւններուն եւ նպատակներուն:
- Նկատի ունենալով աշակերտութեան զանազան մակարդակները, կ'ակնկալենք, որ դաստիարակը տրուած նիւթերը կը փոխանցէ մանկավարժական իր փորձառութեամբ եւ հայեցողութեամբ, առաւել կամ նուազ մանրամասնութեամբ, կամ պարզութեամբ: Հիմնականը՝ լուսարձակի տակ առնել նպատակը, կամ բարոյական արժէքները:
- Այս թղթածրարին մէջ նկատի առնուած են հետեւեալ երեք մակարդակները.-
  - ա. Նախակրթարանի տարրական տարիները՝ Մանկապարտեզ, Առաջին եւ Երկրորդ դասարանները,
  - բ. Նախակրթարանի Երրորդ, Չորրորդ եւ Հինգերորդ դասարանները,
  - գ. Միջնակարգի Վեցերորդ, Եօթներորդ եւ Ութերորդ դասարանները:Բնականաբար թղթածրարը իր ամբողջութեամբ կրնանք օգտագործել նաեւ երկրորդական վարժարանի դասարաններուն համար:
- Թղթածրարին մէջ օժանդակ գրականութեան նիւթերը մեր հայեցողութեամբ ճշդած ենք, թէ ո՞ր դասարաններուն համար օգտագործելի են անոնք: Փափաքելի է, որ յարգուին սահմանումները, որպէսզի յաջորդական տարիներու ընթացքին, աշակերտները ձանձրացուցիչ կրկնութիւններու զգացումը չունենան: